

ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Բրիտանական բժշկական ընկերութիւնը, Արեւելագէտների IX ժողովը Լոն-դոնում, Բանաստեղծ Շեքսպիր ծննդեան հարիւրամակը, Ձիովաննի վերդան և Պիետրո Մասկանլի, Գրական վաստակի գնահատութիւնը Ֆրանսիայում, Խաղաղութեան դաշնակցութեան ժողովները Բեռն քաղաքում, Բերլինի համալսարանին ցուցահանդէսի վիճակը, Մի քրէական գործ, Ամերիկայի դիւտը, Ձիկազօի համալսարանին ցուցահանդէսը, Ամերիկական գլխաւոր կուսակցութիւնները, Հանրապետականների ժողովը Միննէպպոլիս Ռամ-կապետականների ժողովը Ձիկազօ, Նոր գրքեր:

—Բրիտանական Բժշկական Ընկերութիւնը ունեցաւ իւր 60-րդ ժո-ղովը Նոտտինգեմ քաղաքում, ներկայութեամբ 1200 դելեգատների: 1) Օրէնքների մասին ընդդէմ արբեցողութեան. 2) Միջոցներ արբեցո-ղութեան դէմ և ալս ախտի ենթարկածներին բժշկի վկայականի համ-մատ հիւանդանոցներում ընդունել տալու մասին. 3) Ուսանողները և ու-սումնաբանները բժշկական քննութեան ենթարկելու մասին. 4) Առաջա-դիմութիւնների մասին բժշկական գիտութեան բոլոր ճիւղերի մէջ:

Ապա պ. Հալտոնը մի տաք ճառ արտասանեց կին բժիշկներին ընկերու-թեան անդամ ընդունելու մասին, իսկ տիկին Հեռուեա Լնդերսոնը մատ-նացուց արեց, որ ալս բոպէլիս Անգլիայում գործում են 140 կին բժիշկ-ներ զոկտորութեան աստիճանով և 130 հոգի, որոնք ուսանում են բժշկու-թիւնը, Մի քանի ճառախօսների ճառերից վետու կին բժիշկներին վիշալ Ընկե-րութեանը անդամ ընդունելու առաջարկը ընդունւեց մեծ ոգևորութեամբ:

—Արեւելագէտների IX համաժողովը տեղի ունեցաւ Լոնդոնում, Առա-ջին նիստը (նոր տոմար սեպտ. 4-ին) կալացաւ նախադասութեամբ պրոֆ. Մաքս Միւլլերի, Ներկայացուցիչներ էին ուղարկել ժողովին՝ 11 տէրու-թիւններ, 27 գիտնական ընկերութիւններ և 13 համալսարաններ, Հայե-րից ներկայ էին հայր Ս. Պարտեան, պրոֆ. Մ. Չերազ, Յակոբեան և Արսէն Գնոճի—«Արեւելք» լրագրի թղթակիցը:

«Տալմա» լրագրի սեպտեմբեր 6 համարում տպւած է սրա պաշտօնա-կան ծրագրի վերաբերեալ համաժողովի զբաղմունքներին նաև հետեւեալը:

«Յետադալ ներկայացուցիչները նշանակւեցան օտար պետութիւններէ

կողմից՝ կոմս զը Գուրերնատիս—Խտալիալի, ֆոն Բիւհեր—Աւստրիալի, պրոֆ. Լանման—Միացեալ Նահանգների, պրոֆ. Կիհլհորն—Գերմանիալի, պրոֆ. Կիհլ—Շեցիալի, Կեմբրիջ համալսարանի փոխ-կանցլերը—Անգլիալի, պրոֆ. Մինաս Չերազ—«Արմէնիալի»-ի կողմից և այլն:

Այս ներկայացուցիչներից կազմած լանձնաժողովի առաջին նստում—պէտք է զննէր մասնաւոր Արեւելագէտների զալ համաժողովուր ժողովակու խնդիրը—Ժընև (որտեղից ստացած էր պրոֆ. Նաւիլլի հրաւերը), թէ Բուխարեստ (որտեղից ստացած էր Ռումանական թագաւորի հրաւերը): Մասնաժողովը—պ. Մ. Չերազի պատճառարանութիւնները լսելուց վստոյ միաձայն ընդունեց պրոֆ. Նաւիլլի հրաւերը Արեւելագէտների X համաժողովը Ժընև գումարելու համար, իսկ Ռումանական թագաւորի հրաւերը սիրալիւր ընդունել XI համաժողովի համար:

Սկսած 6 նստում Խտալիալի ներկայացուցիչ կոմս Անջելօ զը Գուրերնատիսը համաժողովի Մարդարանական բաժնում կարդաց իւր մի զեկուցումը «Առասպելի դերը ժողովրդական հեքիաթներում» և ապա առաջարկեց հիմնել Լոնդոնում մի Միջազգային ընկերութիւն Արեւելի հեքիաթները սպելու համար:

Այս առաջարկութեան օգտին խօսել են 4—5 ուրիշ անդամներ, որոնցից լսող խօսք է առել պրոֆ. Մինաս Չերազ կարդալու համար իւր «Մանօթութիւնները հալ դիւցարանութիւնից» հետեւեալ բովանդակութեամբ. 1) Արեւ և նրա պաշտամունքը, 2) Լուսնիկա և սրա սեռը, 3) Աստղ և սրա ազդեցութիւնը մարդու վիճակի վրա, 4) Աղբիւր—ջրի պաշտամունքը, 5) Նիբատ—սրա հողին, 6) Սրբազան ծառեր—սրանց նմանութիւնը հողի ստած էակներին, 7) Վիշապ—սրա ծնունդը և մահը, 8) Նախնեաց պաշտելը—մահի գաղափար, 9) Գիշերմութ—անձնաւորումն գիշերալին խաւարի, 10) Աղէքսանդրի դուտորը—հուշկապարիկ ¹⁾ Մի կնոջ մասին մի առասպել, 11) Կախարդութիւններ—պէսպէս գործադրութիւններ, 12) Վեցհազարեալ—գիրք գաղտնի գիտութիւնների, 13) Դեեր—սրանց դերը, 14) Փերիները—ժողովրդական հաւատք, 15) Ալք—չաստուածութիւններ, որոնց կոչումն է խեղդել ծնող մայրերին, 16) Խըբըլիկ—արթուն և չարածէի չաստուածութիւն և իւր հոճարները, 17) Խեղերելէզ—չաստածութիւն, որը նշանակում է երեսալոց, սրանց ծնելուց առաջ, 18) Գրող—նմանեցրած Հերմեսին կամ Թօթին, 19) Կաղանդ—իբր վոխարինող հին Ամանոր չաստածին, 20) Տեառընդառաջ—կրակի պաշտամունք, 21) Շուտիկ—սրա նմանութիւնը լոյն դիւցարանութեան ըմբռնողութեան հետ, 22) Գուշիւղ—նմանութիւն Պրիապի հետ, 23) Շեւտ—նմանութիւն Սիւալի հետ, 24) Խոնջոլոզ—նմանութիւն վեղական դիւցարանութեան հետ—Նզրակացութիւն:

¹⁾ Une sirène, сирена.

Պրոֆ. Մ. Զերազի ընթերցումից լետոլ-Ալքերի պարսկական ծագումի մասին մի նկատողութիւն արեց պ. Դարմաշտետերը, ապա պ. Գուքերնատիւր իւր գոհունակութիւնը լատինաց հետաքրքրական զեկու-
ցումի մասին, իսկ դոքտոր Նալորը (Dr. Nalor) այն միտքը լատինաց, որ
պրոֆ. Զերազի զեկուցումը կարող է առաջին մասը կազմել պ. Գուքեր-
նատիւրի առաջարկած հրատարակութեան մէջ:

Սեպտ. 7-ին, Արեւելագէտների համաժողովի արիական բաժնում կար-
դաց իւր զեկուցումը հաջ հասարակութեանը քաջ ծանօթ գիտնական
պ. Գ. Ա. Շուռմֆը «Հայկական ուսումնասիրութիւնների առաջադիմու-
թեան մասին»: Պր. Շուռմֆը պաշտպանում էր 1) Հայերէնի կարեւորու-
թիւնը համեմատական լեզագիտութեան մէջ, 2) Պատմական արժէքը
հաջ հնախօսութեան (archéologie, archéologie) և հաջ գրականութեան,
Առաջին կէտը ապացուցանելու համար պ. Շուռմֆը երկարորէն խօսեց
հաջ գրարաւի և աշխարհարաւի մասին, լիշատակելով նաև բոլոր միւս
բարբառները: Յարգելի գիտնականը մատնացոյց անելով մի նոր ժողովը-
դական պոէմալի լատնագործութեան վրա, աւելացրեց թէ «թերևս ան-
կարելի է որ Արմէնիան վաղը ունենայ Ֆինլանդիայի նման իւր ժո-
ղովրդական կալիւլալան»: Իւր զեկուցման երկրորդ մասը փաստաբանե-
լուց լետոլ—պ. Շուռմֆը առաջարկեց հիմնել մի «Միջազգային ընկերու-
թիւն հաջ ուսումնասիրութիւնների ընդարձակման համար»—նման այն
ընկերութեան, որի նպատակն է լոնական ուսումնասիրութիւնները:

Պր. Շուռմֆի առաջարկութիւնը պաշտպանում են պրոֆ. Կոուէլլը
(Cowell) և Մ. Զերազ, ապա պ. Նախագահը խոստանում է արձանագրել
պ. Շուռմֆի առաջարկութիւնը ատենագրութեան մէջ:

—Նոյն համաժողովը ունկնդիր է եղել պրոֆ. Ասսամից ստացած մի
թղթակցութեան—որի մէջ նա խօսում է Ասորեստանի և Բաբելոնիայի
մէջ տեղի ունեցած պեղումների մասին և գտնած հնութիւնների աւեր-
ման մասին:

Մտքերի փոխանակութիւնից լետոլ ժողովը ընդունել է պրոֆ. Հալ-
վարտի հետեւեալ որոշումները:

1) Ժողովը ցաւ է լատնում, որ թրքական կալութեան գաւառ-
ների մէջ հնութիւնները ոչնչացնում են և թէ լատոլ է, որ թիւրք կա-
ռավարութիւնը միջոցներ ձեռք կառնի ալլ աւերման առաջին առնելու
համար:

2) Փափաքելի է, որ Եւրոպայի և Ամերիկայի գիտնական ընկերու-
թիւնները և անձերը համաձայնութիւն կապեն միւսան գիմում անել,
իւրաքանչիւր իւր կառավարութեան, որպէս զի վերջիններս իրանց ազ-
դեցութիւնը դուր զննն Բ. Դրան վրա, որ արտօնութիւն տալ փորձառու
հնախօսներին, խոզարկութիւններ անելու իրանց անձնական կամ իրանց

կառավարութեան հաշվի, գտնւած առարկաներից երկու կողմերին էլ լրացնելու համար ապագայում մի կարգադրութիւն անելու:

Անդլիական բանաստեղծ Շելլի'ին սրա ծննդեան 100 տմեակի առիթով անցեալները լիչեց ամբողջ Եւրոպան և մանաւանդ Խաալիան, որը նրան գրկաբաց հիւրասիրել էր, բայց ուր սակաւն բանաստեղծը զոհ գնաց զեռ. բոլորովին երիտասարդ հասարակում. Նա ծնւեց 4 օգ. 1792, մեռաւ 4 լուլ. 1822) ծովի մի փոթորկից, Շելլին սիրում էր մեն մեծակնստեղ մի փառքիկ նաւակի մէջ և լուս դնելով իւր սեփական բազումների ուժին՝ ծովալին պտուտներ անել Ազրիական ծովի երեսին. Նա նաւակ էր նստել մի գեղեցիկ օր, երբ ծովը լանկարծ ալէկոծւում է և կուլ տալիս նշանաւոր բանաստեղծին:

Արտաքսած Օկսֆորդ համալսարանից իւր կրօնական անհաւատ լինելու պատճառով, մերժւած իւր հօրից չարաբաղդ մի պսակի առիթով, որ արել էր իւր ծնողների կամքի հակառակ և դատաստանական վճիռներով զրկւած իւր որդոց դատարարակելու—Շելլին վարում էր Վիքերի անուրով մի աղմկալուղ կեանք լի ֆզիկական և հոգեկան տանջանքներով: Շելլին հասցրել էր իւր բարեկամ Բալդոնի սկեպտիկականութիւնը պանտէիստի և ատէիստի, 17 տարեկան հասակում իւր «Մաք Թագուհի» գրածքում նա ցոյց է տալիս թէ մինչ որ աստիճանի անհատական անսահման ազատութեան նա կը կամենար փոխել ներկալ կեանքի հասարակական, քաղաքական ու կրօնական պայմանները:

Մնած 1792 Լոնդոնում Շելլին իւր գրածքների մեծամասնութիւնը գրել է Խաալիայում, Հռոմում—իւր Պոտմթէոսը, Ֆլորենցիայում—Մեդուզը, Վենետիկում—Իգենական բլուրներ Լիւորնօյում—Cenci և ալն:

Երբ ծովի մէջ գտնւեց նրա մարմինը, նա ալրւեց Բալդոնի կարգադրութեամբ և մոխիրը բերեց Հռոմ: Մի մարմարէ տախտակի վրայից պէտք է ձեռքով հեռացնել սպիտակ ծաղիկները կարդալու համար:

Percy Bysshe Shelley.

Cor cordium.

—Լրագրերը հաղորդեցին որ Զ. Վերդան մի դատ էր սկսել ընդդէմ սյ. Մասկանլի'ի մի խոշոր գումար պահանջելով թէ ինչու ալս վերջինս՝ առանց համաձայնութիւն տաճալու՝ փոխադրել էր օպերայի իւր վիպական գրածքներից մէկը:

Դատաստանը ենթարկեց Մասկանլի'ին լօգուտ Վերդալի 100.000 ֆրանկ տուգանքի (ալն ենթադրութեամբ որ Մասկանլին իւր օպերայից ձեռք բերած կը լինի սրա քառապատիկը):

Ո՞վքեր են զոքա:

Այդ անունները սակայն գրեթէ անծանօթ են հալ ընթերցողներին մեծամասնութեանը:

Զիւլմանի Վերդա՛ն համարում է իտալական Էմիլ Զուլա, ալնպէս՝ ինչպէս որ Էդմոնդօ Ամիլիսը համարում է իտալական Օկտաւ Ֆեօլէ. իսկ Լուիջի Կապուանան — իտալական Պոլ Բուրժէ ¹⁾: Զիւլմանի Վերդա՛ն նւիրում է իւր գրիչը մեծ մասամբ իւր հայրենիքի նկարագրութեան, — հայրենիքի՝ որ հռչակած է իւր աղքատութիւնով, Նա անխնայ կերպով հրապարակ է հանում գիւղական կեանքի ամբողջ մերկութիւնը և առանց խիստ գուշներ խնայելու պատկերացնում է գիւղացիների ծուլութիւնը, սրանց անառակութիւնները, ցածութիւնները և ալն. և այս ամենի հետ միաժամանակ հարաւարին գեղեցիկ ընդթիւնը, երբեմն խաղաղ, երբեմն մռնչող ծովը, կապուտակ երկինքը, դողդոջուն արմաւենիները, երբեմն հրապուրիչ և երբեմն վալսերնի ընդթեան տեսիլները, Զ. Վերդա գրած ունի շատ մանր գրւածքներ, որոնց թւում է վիշալ *Cavalleria Rusticana*-ն, որը նիւթ տեսք թէ Մասկանիի երաժշտութեան և թէ նոյն անունը կրող մի դրամայի, որը խաղացել է առաջին անգամ 1884 թ. 14 լուսարի Տուրինի թատրոնում մասնակցութեամբ Սառա Բեռնարի հռչակը վալսերնի խալսի՝ դրամատիկական դերասանուհի՝ Էլենորա Դուպէի և ունեցել ահագին չաշողութիւն:

— Էմիլ Զուլա՛ի նոր աւարտած «la Débâcle» ռոմանը մեծ խօսակցութեան միակ առարկալ եղաւ, Թողնելով «Մուրճ»-ի կրիտիկոսներին ալ գրւածքի գրական արժանաւորութիւնների մասին խօսելու դնենք ալ տեղ գրական ու լրագրական վաստակների դրամական գնահատութեան աստիճանները ֆրանսիայում:

«Պարիզի Արձագանք», Ժիլ Բլազ, Ֆիգարօ լրագրերը վճարում են նշանաւոր գրողներին ա մեն մի քրոնիկի համար 200 ֆրանկ, 250 ֆրանկ, 300 ֆրանկ, 350 ֆրանկ. Այդ քրոնիկ գրողներից մի քանիսը նաև վիպագիրներ են. Առման Սիլվեստր, Կատիւլ Մենդես, Էմիլ Բերտերա, Հանրի Յուկիէ, Ժան Բիշպեն և ալն:

Եւ լրագրի ալն համարները, ուր կան այդպիսի անունների ստորագրութիւններ վաճառւում են հազարներով. Անլորդ Վի լինիլ վիշել ալստեղ որ ֆրանսիական լրագրերը գրեթէ չունին ֆրանսիայում տարեկան բաժանորդներ, Ոչ, ալ լրագիրը գրեթէ 90%/-ով ծախւում է հատով և ալք է պատճառը որ լրագրերը ընկնում են մեծ անունների ետեւից, Նոյնն են անում և ամսագրերը որոնք տարալ վերլից շատ առաջ շտապում են

¹⁾ Ֆրանսիացի ժամանակակից կրիտիկոս և հոգեբանական վիպասան:

գալտարարել ի գիտութիւն ամենքի—թէ ամսագիրը զալ տարաւ համար ունի իւր թղթակալում ալս ինչ նշանաւոր ուսմանիտի կամ ալս ինչ հուշակաւոր վիպագրողի ուսմանը կամ վէպը:

«Տաճ» («Temps» — ժամանակ) լրագրի լուրջ թատրոնական բաժին տաճոյ Ֆրանսիոյ Սարսէլ'ը ստանում է ամսական միմիայն 1000 ֆրանկ ¹⁾, մինչդեռ հատը մի սու արժող, օրինակի համար, «Petit Journal» (փոքրիկ լրագիր), Petit Parisien (փոքրիկ պարիզեցի) լրագրերը իրանց ֆելետոններում տպուղ Ռիչըրտ'ի կամ Լսաւիէ դը Մոնտեպլեն'ի ֆրանսիական թեթեւ ճաշակի ուսմանի ամեն մի տողին վճարում են մէկ ու կէս ֆրանկից սկսած մինչև 3 1/2 ֆրանկ, ինչ ասել կուզի որ լրագիրը և ամսագրերը ձեռք են բերում առաջին տպագրութեան իրաւունքը, իսկ գրածքի առանձին հատորով արտատպելը կամ թարգմանութեան տալու իրաւունքները մնում են հեղինակի ձեռքին: Այդ հաշուով առաջին տպագրութեան համար La Vie Parisienne թերթը վճարեց 20 լալլին սրա Դեբակլի համար 30.000 ֆրանկ, Illustration թերթը վճարեց Ալֆ. Դոդէին սրա Անմահի համար—նոյնքան, Revue Illustrée թերթը վճարեց 20 լալլի նրալի համար (Le Rêve)—25.000 ֆրանկ, Մոպասանը իւր «Աւելի ուժեղ քան մահը» գրածքի համար ստացաւ 12.000 ֆրանկ, 20 լալլան իւր Մարդ գաղանի համար ստացել է 30.000, Նոյն ձևով l'Illustration թերթը ձեռք է բերել Դոդէի «Ընտանիքի պաշտպանը» 30.000 ֆրանկով և Revue Hebdomadaire թերթը 20 լալլի «Բժիշկ Պասկալը»—35.000 ֆրանկով, Պատահում է նաև որ թերթերը ձեռք են բերում երկրորդ տպագրութեան իրաւունքը վճարելով տողին կէս ֆրանկ, Գալով առանձին հրատարակութիւններին (առաջին տպագրութիւնից լիտով որ և է թերթում) հեղինակը ստանում է հրատարակիչ գրավաճառից ծախած գրքի սոմն մի օրինակի համար—25 սանտիմից սկսած մինչև կէս ֆրանկ, 20 լալլի Դեբակլը առանձին գրքով լուս է տեսել արդէն 134 տպագրութեամբ! Իւր բոլոր գրածքների համար մինչ օրս 20 լալլան ստացել է մօտ մէկ ու կէս միլիոն ֆրանկ, նոյն թւում 200.000 ֆրանկ թարգմանելու տւած իրաւունքներից, Ընդամենը իմիջ 20 լալլի մինչ օրս ծախւած գրքերի թիւը հասնում է մի շատ պատկառելի գումարի աչն է 1.338.000 հատորի:

Այս բեղմնաւոր գրողը, քսան տարի անխոնջ գրական աշխատանքից լիտով, ստանում է ներկալումս տարէնը թէ իւր հին գրածքների վաճառումից ու թարգմանելու տւած իրաւունքներից և թէ նոր գրող ուսմաններից մօտ հարիւր հազար ֆրանկ, և երբ անցեալները մի թերթի աշխատակից 20 լալլի հետ ունեցած տեսակցութեան ժամանակ խօսք բաց արաւ սրա հարստութեան մասին—20 լալլան բացականչեց. «Այդ առասպել-

¹⁾ Գրանկը որ արժէ ներկայ կուրսով 40 կոպ ունի 100 սանտիմ կամ 20 սու. ասել է թէ սուճ արժէ 2 կոպ:

ներ են թէ իբր Զոլան միլիոնատէր է... Պարիզում չքեղ ապրելու համար հարկաւոր է տարէնը 3 միլիոն, իսկ ես ստանում եմ... Հարկը հաղար ֆրանկ, բաց թէ ամենհասարակ գեղարւեստորէն շինած մի սեղանը արժէ ներկաւումս 10.000 ֆր. և մնացած էլ սրա համեմատութեամբ...

Զոլան բացառութիւն չի կազմում մարդկանց մէջ, որպէս զի մոռանալով իւր նախկին չքաւոր դրութիւնը, ներկաւումս երբ նա ապրում է պալատների մէջ և ձեռք բերում 10.000 ֆրանկանոց սեղաններ—նա իրան դարձեալ չքաւոր չը համարի...

Սա նախելով անցեալի վրա ինչ ենք տեսնում, Լա. Բրիւլեո ֆրանսիացի բարոյագէտը ¹⁾ իւր Նշանաւոր *Les Caractères* գրածքը գրեթէ ձրի գիշերելով իւր հրատարակչին՝ սրան միջոց տեց ձեռք բերելու 300.000 ֆրանկ, Դիդեո ²⁾ փիլիսոփան ստացաւ իւր «Փիլիսոփայական մտածմունքներ» համար 600 ֆրանկ, Բեռնարդէն ³⁾ զը Սեն Պիեռը ⁴⁾ իւր *Voyage à l'Île de France* գրածքի համար ստացաւ միմիայն 1000 ֆրանկ, Ժան Ժակ Ռոսսոն ⁵⁾ իւր հռչակաւոր Էմիլի համար միմիայն 6000 ֆրանկ, Սրա «Նոր Էլիզի» վէպը իւր ժամանակին աչնպիսի հռչակ էր ստացել, որ գիրքը վերցնում էին կարդալու և ամեն մի ժամին վճարում 60 սանտիմ

Գալով Անգլիային տեսնում ենք որ ալտեղ գրողները աւելի ևս առատ են վարձատրուում. Տեկերէլը ստանում է մի գրածքի համար 125.000 ֆրանկ, Էլիստը իւր *Romola*-ի համար 175.000, կոմս Բեկոնս-Ֆիլդը իւր Էնդլիմիոնի համար 300.000 ֆրանկ, և մինչդեռ Բալզոնը ստացել էր իւր Զալլդ Հարոլդի համար 106.875 ֆրանկ, Միլտոնը իւր «Արքունեալ դրախտ» համար միմիայն 125 ֆրանկ. բաց վալտեր Սկոտսն է՝ որ իւր բազմահատոր գրքերի համար ստացել է մօտ 2¹/₂ միլ.:

«Խաղաղութեան դաշնակցութեան» կողմնակիցները ⁶⁾ Շէլլցարիալի Բեռն մարաքաղաքում անցեալ օգոստոսի վերջերքին երկու համաժողովներ ունեցան:

Մեր ընթերցողներին լաւտնի են ալս դաշնակցութեան նպատակները—թէ հակապատերազմականութիւնը և միջազգային միջնորդութիւնը և թէ դաշնակցութեան գործադրած միջոցները:

¹⁾ 1639 թ. ծնւած ու 1696 վախճանւած:

²⁾ Դենիս Դիդեո՝ 1713—1784 թ.:

³⁾ Հեղինակ հայերէն բազմիցս թարգմանած «Պող և Վիրգիլիալի», ծնւած 1737, վախճ. 1784.

⁴⁾ Նշանաւոր գրող, ծնւած 1712, վախճանւած 1778. Յալտնի իւր գրածքների ոճի նրբութեամբ ու մտքերի երբեմն տարօրինակութեամբ:

⁵⁾ Տես «Մուրճ» № 7—8 երես 1209:

Այս ժողովները աչքի էին ընկնում իրանց կարգադրութեամբ և ոչ մի ջանք չէր խնայւած հեռացնելու համար պալլոզ և սուր կերպարանք ունեցող հարցեր (Նման Լլղաս-Լօթարիգիալի հարցին), այնպէս որ ժողովի նիստերը չէին լիցեցնում նախորդ համաժողովները, որոնք տեղի էին ունեցել՝ 1867 թւին ժընեւում, նախադատութեամբ Գարիբալդիի, 1868 թւին Լոդանում նախադատութեամբ Վիկտոր Հիւզօի և 1869 թ. Բեռնում նախադատութեամբ Լամիլիօ Կառտելարի:

Ներկալ տարալ առաջին ժողովի նիստը էր օգոստոսի 10/22: Նիստերը շարունակւել են մի ամբողջ շաբաթ մասնակցութեամբ զանազան երկիրներից եկած հին ու նոր աշխարհի ներկայացուցիչների թւով 300-ից աւելի նախադատութեամբ հանրապետութեան խորհրդական (conseiller fédéral M. Ruchonnet) պ. Բիւլոննէի, Մասնակցողների թւում կալին և գեղեցիկ սեւից՝ բարոնուհի տ. Բերթա Սուտտները. (Աւտորիալից), փաստաբան Տ. Լոկուզը (Ամբրիկալից), հալուհի Տ. Յուսականը և ալլն: «Ձէնքերը վալր» գրքի հեղինակ բարոնուհու Ֆրանսերէն արտասանած ճառերը շարունակ ընդհատում էին ծափահարութիւններով:

Այս համաժողովներին մասնակցողները ըստ ազգութիւնների բաժանւում էին այսպէս 96 անգլիացի, 94 շւէյցարացի, 76 Ֆրանսիացի, 41 իտալացի, 26 աւստրիացի, 20 ամերիկացի, 11 ռուման համալսարանականներ, 10 շվեդացի, 6 բելգիացի, 5 գերմանացի, 4 դանեմարկացի և 1 հալուհի:

Օգոստոսի 17/29-ից սկսւեցին երկրորդ համաժողովի նստերը, — համաժողովի, որին մասնակցում էին մի մի ալն պարլամենտն երկրի անդամներ, թւով երկու հարիւրից աւելի և նախադատութեամբ Շւէյցարիալի խորհրդական Նիւմա Դրոզի (Numa Droz):

Թւինք երկու համաժողովների վճիռ որոշումներից մի քանիսը:

1) «Խաղաղութեան» գալ համաժողովը նշանակել Չիկագօի ցուցահանդիսին 1893 թ.:

2) Խաղաղութեան դաշնակցութեան մշտական կենդրոնատեղին համարել Բեռն քաղաքը:

3) Ձեռնարկել հաստատելու Միջազգային Միջնորդ դատարան, որին ղիմը պարտաւորեցուցիչ դարցնել բոլոր պետութիւններին պատերազմ լալտարարելուց առաջ:

Պարլամենտների անդամները վճռել են:

1) իրանց տէրութիւններին ընդունել տալ մասնաւորների սեփականութեան զերծ պահպանելը ծովի վրա պատերազմների ժամանակ:

2) Միջնորդ դատարանի ենթարկել տալ՝ կալանալիք դաշնագրերի մի առանձին լօւաւածով՝ պատահելիք վէճերը՝ վերաբերմամբ առետրի և նաւազնացութեան, արդիւնազործական, գրական և գեղարւեստական սեփականութիւնների:

Լրագրերը հաղորդում են նաև որ Բեռնում ժողոված համալսարանականները վճռել են համահամալսարանական դաշնակցութիւն հաստատել և այդ նպատակի համար մի համաժողով գումարել Հռոմում:

Լինի թէ չլինի ցուցահանդէս Բերլինում:

Այս հարցը շատ էր զբաղեցնում բոլոր գերմանացիներին վերջին երկու երեք ամիսներս: Մինչ այս մինչ աչն՝ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնոն իւր որոշումը և վճիռը տաւ. 1900 թւի ցուցահանդիսի համար Պարիզում և այս քաղը աւելի ևս չլիթեցրեց գերմանացիներին:

Էսթեն Բիխտերի Ազատամիտ լրագիրը երկար շարունակեց իւր լարձակումները: «Պարիզը, իւր ասելով, երկու զօրեղ առաւելութիւններ ունի այս դէպքում, նրա շրջակայքի գեղեցկութիւնը և հիւրերին տրեւիք զարճութիւններ ըազմազանութիւնը: Ֆրանսիան թատրոնների երկիր է, իսկ մեր թատրոնների խաղացած պիեսները ֆրանսիական են. օտարը կը նախադասի ընագրում լսել ու տեսնել քան մեզանում թարգմանօրէն... Յանկանում ենք աշուտամիսակիւ չաջողութիւն, թէև մեր հաւատը մեր ցանկութիւնների հետ մի մակերևութի վրա չէ»:

Մի ուրիշ առարկութիւն, որ առհասարակ անուամ էր ցուցահանդիսի դէմ Գերմանիայում՝ է ցուցահանդէսների ապարդիւն լինելը. գերմանական արտաքին առտուութը երկրորդ տեղն է բռնում Յւրոպայում (առաջինը է անգլիականը) և, եթէ ցուցահանդէսների բերած օգուտը ապացուցած լինէր, անգլիացիք ձեռք չէին քաշած լինիլ այդ ձեռնարկութիւններից՝ անգլիական 1862 վերջին ցուցահանդիսից չտուր:

Սակայն չօգուտ ցուցահանդիսի (1897—1898 թւերից մինում կալանալու պալմանով) աշխատող շատ կան: Ինքը Բերլին քաղաքը չառկացրել էր 10 միլիոն մարկի օժանդակութիւն: Հաւանական կառավարիչ համարում էր պր. Ռեօլօ (Reuleaux), որը պապէս էր ձևակերպում իւր ծրագիրը. նմանողութիւն չը լինի. էթէ մենք չունեցանք սեփական մտքեր՝ աւելի լաւ է ետ կանգնելը»:

Մի ուրիշ գործ, որ պակաս չէր զբաղեցնում գերմանացիներին, — մի դատական գործ էր ընդդէմ մի հրէայի, որը իբր թէ մի քրիստոնեայ երեխայ էր մորթել՝ արինը ձեռք բերելու համար (Procès de Cleves):

Այս գործը բնորոշում է աչն իրողութիւնը, որ ամբողջ գրեթէ միակերպ է, միատեսակ է իւր զարգացման աստիճանով թէ Ռուսիայում, թէ Աւստրա-Հունգարիայում (ուր այդպիսի մի պրոցես նմանապէս մեծ աղմուկ էր հանել) և թէ Գերմանիայում:

Հաւատալ չի լինում թէ մենք ապրում ենք XIX դարու վերջում,

ուր ամբոխի նախապաշարումները դեռ շարունակում են պահպանել իրանց ուժի ամբողջութիւնը:

Տեղական լրագրերը լին Էին արշինանոց տեղեկատու սխնեակ. ներով դատաստանական դաշլիճում տեղի ունեցած վկաների ցուցմունքների ու փաստարանների արտասանած ճառերի վերաբերեալ:

1891 թ. լուծիւ 29 կորած տղայի անունն էր Յովհաննէս Հեզգման: Մեղադրուողը էր մի մտավաճառ հրէայ Բուշոֆ՝ Էր Մեղադրւածը արդարացւած է:

Ամերիկայի գիւտը արած է, ինչպէս լատնի է, նոր տոմարով 12 հոկտեմբեր 1492 թ.: Ամերիկացիները մեծ և փառաւոր պատրաստութիւններ տեսան ալս դէպքի առիթով: Տօները սկսել են հոկտ. 8 Նիւ-Իօրկում ներկայութեամբ բոլոր հասարակական և մշակների ընկերութիւնների:

Հոկտ. 9-ին կիրակէ օրը, Նիւ-Իօրկի բոլոր եկեղեցիներում քարոզների համար Նիւթ առնւեց Ամերիկայի 400-ամեայ գիւտը: Հոկտ. 10-ին մի փառաւոր թափոր 15.000 հոգուց բաղկացած մի խմբի (իտալացիներէց, սպանիացիներէց և մեքսիկացիներէց) XV դարու շքեղ զգեստներով ներկայութեամբ նախագահ Հարրիսոնի, նահանգապետների և ալն, ձաշից ընտոյ տեղի ունեցաւ կոլումբոսի արձանի բացումը կենդրոնական պարկի մէջ: Հոկտ. 10-ին երեկոյեան 10 կառախմբեր մեկնեցին Նիւ-Իօրկից դէպի Չիկագօ պաշտօնական անձինքներով (նահանգապետներ, քաղաքագլուխներ և ալն) և նոյն ամսի 12-ին տեղի ունեցաւ ցուցահանդէսի օրհնութիւնը: Գալ տարւալ համաշխարհային ցուցահանդէսը իսկապէս որոշւած էր ի վիշատակ ալս 400 ամեակի, բալց ետաձգւեց զլիսա որապէս աչքի առաջ ունենալով աղմկալի նախագահական ընտրութիւնները:

Առ ալժմ ծախսւած է ցուցահանդէսի վրա 17 միլ. դոլար ¹⁾, իսկ ամբողջ դումարը պիտի հասնի 22 միլ. դոլարից աւելի:

Մուտք է սպասուում մօտ 24 միլ. դոլար, որոնցից մօտ 18.750.000 դոլար մուտքի տուներէց:

Յետագայ աղիւսակից ընթերցողը կը տեսնի թէ համեմատաբար նախորդ համաշխարհային ցուցահանդէսների հետ՝ Չիկագօինը ինչ բարձր աստիճանի վրա է դրւած:

Ապագան ցոյց կը տալ թէ ամերիկացիների երազած լուսերը ինչ չափով կարդարանան:

¹⁾ 1 դոլարը = մօտ 2 ուրբլի:

Ահա լիշեալ աղիւսակը:

	Այլ տարածութիւն	Երկրորդ տարածութիւն	Այլ տարածութիւն	Տեղութեան օրերի թիւը	Օրական աղիւսակների թիւը	Յուշահանդիսի նըստ- ւածքը
	Հազար	Գլ.	Հազար			
1851 թ. Լոնդոն . . .	21	17	6 144	42		
1855 » Պարիզ . . .	24 ¹ / ₂	22	5 200	26	5	միլ. դու.
1862 » Լոնդոն . . .	23 ¹ / ₂	29	6 171	36	2.3	» »
1867 » Պարիզ . . .	37	52	10 217	47		
1873 » Վիեննա . . .	40	42	7 186	39	7.85	» »
1876 » Ֆիլադելֆիա .	60	60	9 156	62		
1878 » Պարիզ . . .	60	52	13 194	67		
1889 » Պարիզ . . .	75 ¹ / ₂	60	32 183	181	6.50	» »
1893 » Չիկագո . . .	400				22 միլիոն.	

—Միացեալ Նահանգների Նախագահի ընտրութիւնը, որը, ինչպէս չափերի է տեղի է ունենում չորս տարին մի անգամ, մեծ կարևորութիւն ունի Հիւսիսային-Ամերիկայի կեանքի համար, թերևս նաև ամբողջ աշխարհի—քանի որ Նախագահի քաղաքական և տնտեսական ուղղութիւններից են կախած լինելիք արարքերութիւնները բոլոր պետութիւնների հետ: Ներկայ Նախագահ Հարրիսոնը պատկանում է հանրապետական կուսակցութեան և ընտրւեց 1888 թ. ընդդէմ ռամկական Գրովեր Կլեւլանդի (Grover Cleveland) աջակցութեամբ Ջեմս Բլենի, Առաջինը թէև ստացել էր 5.440.531 ձայն, բայց նրա կողմն էին ամերիկական դաշնակցութեան 20 նահանգներ 233 քաւերներ ներկայացնող, մինչդեռ երկրորդը, Կլեւլանդը, ստացել էր աւելի ձայներ աւել է 5.538.434 ձայն որ տւել էին 18 նահանգներ ունենալով միմիայն 168 քաւեր: Նախագահական ընտրութիւնը կապած է բազմաթիւ ներքին շահերի հետ, շահեր, որոնց հետ կապ ունի ալս կամ ալս կուսակցութեան չափերը. եթէ եկող նոյնաբերին հանրապետականները չափերը չափերի հարրիսոնի, շնորհիւ ռամկապետականների ջանքերի լոգուտ սոցա թեկնածուին,—ապա տեղի կունենան մեծ փոփոխութիւններ թէ կառավարական շրջաններում գտնուող անձերի մէջ և թէ, որ առաւել է, վարչական ուղղութեան մէջ: Ներկայ հանրապետականները չափերի Հարրիսոնի հակած էին աւելի դէպի ունևոր դասը, դրամատիրականը,—մինչդեռ ռամկապետականները իրանց ու-

շաղրութիւնը աւելի պիտի դարձնեն շունեօր և աշխատաւոր դասի դրութիւնները բարոքելու վրա:

Նրկու քաղաքական որոշ կուսակցութիւններ, որոնք ներկայումս ասպարիզի վրա ևն Ամերիկական քաղաքական կեանքում, են վիշնալ հանրապետականները և ռամկապետականները, որոնք ժամանակ չեն կորցնում զալ նախագահական կուի համար պատրաստելու Նրկու կուսակցութիւններն էլ ժողովներ ունեցան, ուր վիճարանում էին կուսակցութեան, աջակէս ասած, դաւանանքի խնդիրը և ուր քւէարկեցան նախագահական թեկնածուները: Այս ժողովները նախապատրաստական են և Ամերիկայում կոչւում են «համաձայնութեան ժողովներ» կամ «զաշնաղրութիւն» (convention):

Ամենից առաջ գոմարեց հանրապետականների կուսակցութիւնը, որի ընդունած ուղղութեան ծրագրի ուրադիծը (որը plat-forme է կոչւում) ի միջի աւելոց հետեւալ կէտերն է պարունակում: 1) Նա խոստանում է անդիպիս թողնել Մակ-Կինլէյի (Mak-Kinley) բիլլի ¹⁾ պրոտեկցիոնական միջոցները իրանց ամբողջութեամբ, 2) նա վիշատակում է եւրոպական պետութիւնների լծարութիւնը Ամերիկայի առաջարկութեամբ ժողովելու երկմտալական խնդրի առիթով ²⁾, 3) պարունակում է մի քաղաքական ակնարկ ընդդէմ Անգլիայի և Ռուսիայի, 4) վիշատակում է թէ Նիկարագուայի ջրանցքը պիտի իրագործւի, 5) խոստանում է անկախութեան պատերազմի վետերաններին նշանաւոր թոշակներ:

Այս կէտերը կարօտ են մեկնութեան, որովհետեւ մեծ կապ ունենալով երկրի տնտեսութեան հետ, քաղաքականութեան հետ—բնորոշում են հանրապետականների ուղղութիւնը:

Առաջին կէտը նպատաւոր է գործարանատէրերին ու դրամատէրերին—նոցա արդիւնաղործութիւնը կը շարունակւի պաշտպանել եւրոպական արդիւնագործութեան մրցումից՝ շնորհիւ Մակ Կինլէյի բիլլի պահպանման:

Նրկորդ կէտը վիշած է արծաթի հանքարատէրերին գրաւելու համար, իրաւ է եւրոպական պետութիւններից շատերը համաձայնել են ներկալ լինելու դրամի երկմտալական համաժողովի, բալց լալտնի չէ արդեօք ժողովի լծիւները կ'ընդունին ամենքի կողմից, թէ ոչ:

Նրկորդ կէտը մի քաղաքական հուճար է՝ ուրիշ ոչինչ, —հուճար, որը թերեւ ձայներ որսալու համար լինի:

¹⁾ Այս օրէնքի շնորհիւ օտար ոչ հում և մշակած ապրանքները չեն կարողանում ներուծել Միացեալ Նահանգները ահագին մաքսերի պատճառով:

²⁾ Տես «Մուրճ» № 7—8:

Զորքորդ կէտը Ֆրանսիացիներէ ղէմ է և ֆրանսիական ձեռնարկութեան ղէմ, որ զեռ վախճանի չի հասել, դա է Պանամայի կանալը: Հինգերորդ կէտը վերջնապէս ամենախաղաղապէս է և ահա ինչու: Անկախութեան պատերազմից 7 տարի լետով թռչակի գումարը հասնում էր տարեկան 30 միլ. գոլլարի, Ներկայումս պատերազմից մօտ 30 լետով թռչակի գումարը հասնել է 141 միլ. գոլլարի, իսկ ստացողներէ թիւը զեռ 878.000 հոգի են, մի թիւ, որ թերեւս զերազանցում լինի անկախութեան պատերազմին կռուողներէ բոլոր թիւն: Անցել են տարիներ և ստացողներէ թիւը իսկի չի պակասում: Բանը նրանում է որ ամեն թռչակաւոր ունի 2 կամ 3 քւէ: Այսպիսով այս ձախերը զնւում, ձեռք են բերում ի վնաս պետական ելմտացուցի:

Մինչեւապօլս տեղի ունեցած ժողովում Բենեամին Լարրիսոնը ստացաւ 904 ձայներէց 535, որոնցից 183 պետական աստիճանաւորներ են:

Ռամկապետական կռակցութեան ժողովին անցնելուց առաջ մի երկու խօսք 3 Ամերիկաների միութեան կամ պան-ամերիկական (Համա ամերիկական) համաժողովի մասին ¹⁾: Նրկու երեք տարի սրանից առաջ ալ խնդիրը շատ էր վիճաբանւում. կազմել ընդդէմ եւրոպական պետութիւններին՝ մի միութիւն երեք Ամերիկաներից՝ հիւսիսային, կենդրոնական և հարաւային Ամերիկաներից: Բոլոր Ամերիկաների պետութիւններից և կառավարութիւններից Հիւսիսային Ամերիկա ուղարկած պատգամաւորները անասելի կերպով չքեղ ու սիրալիւր ընդունելութիւն գտան իրանց ալցելած Հիւսիսային Ամերիկայի ամեն մի քաղաքում: Ապա տեղի ունեցաւ մի ժողով Վաշինգտոնում, որի առաջին նիստն էր 1889 թ. հոկտ. 2, նախագահութեամբ Զ. Բլենի: Հիւսիսային Ամերիկայի առաջարկութեան հետեանքը պէտք է լինէր—երեք Ամերիկաներից ի մի ձուլելը՝ նոր աշխարհի բոլոր սահմանները փակելով հին աշխարհի արդիւնագործութիւնների համար՝ ամերիկական ամբողջ տարածութեան վրա եղբայրութեան, արդարադատութեան, խաղաղութեան հաստատելը, ճաւազնացալին և երկաթուղալին գնացքների և գծերի կառուցանելը, կապելով ամենահեռւոր կէտերը իրար հետ, ալսպէս ասած հիւսիսային բնեւոր հարաւայինի հետ:

Միմիայն վիճաբանութիւնների ժամանակ հրաւիրածները նկատեցին Հիւսիսային Ամերիկայի գերիշխելու ձգտումները ամբողջ Ամերիկան կլանելու համար, և ետ քաշեցին, որով և փուլ եկաւ դղեակ-շինութիւնը աչմարդու, որը է արտաքին գործերի մինիստր Ջեմս Բլենը, և որը իրաւամբ իւր գիպովմատիական արժանաւորութիւնների շնորհիւ՝ ամերիկական Մակկեանել է կոչւում:

¹⁾ Le congrès des trois Amériques, 1889—1890 par Amédée Prince գիրքը, հրատարակած 1891 թ., մանրամասն տեղեկութիւններ է պարունակում այս համաժողովի մասին:

Հանրապետականների համաժողովի վճռի չափանիշները լիարժեք չէին համարվում, որովհետև անհրաժեշտ էր ունենալ անցնելու լուծարման 22, Չիկագո քաղաքում, Կանդ առանձին աղ ժողովի ղեկավարների վրա մի գաղափար տալու համար ամերիկական քաղաքական կենտրոնից: Մինչդեռ հանրապետականները Միլենդապոլիս գրեթե առանց տատանման ու երկար վիճաբանությունների ընտրեցին Հարրիսոնին, ռամկապետականների որոշումները շատ էլ որոշ չէին և պարզ չափանիշներ չէին արդեն: Կլեմենտը կաղթի թէ ոչ, քանի որ սկզբից չափանիշ էր որ Նիու-Իորկի ճահանգը ամբողջապես Գալիո Հիլլի (David B. Hill) կողմն էր: Այս հանգամանքը նրանով էր նշանավոր, որ աղ նահանգի քաղաքների թիվը ամենամեծն է: Բացի Կլեմենտի, Հիլլի անուններից խոսում էին նաև Boies'ի համար, Մորրիսոնի, Կեմպելի, Գորմանի—որոնք գուցե կաղթէին, եթէ միայն երկրորդ քաղաքական ժամանակ շատ քաղաքականացող ճահանգներից մեկն ու մեկը անցնէր սրանց մեկի կողմը:

Յունիս 22, ժամը 11¹/₂ ժողովը բացվեց: Նիստը տեղի ունեցավ մի ժամանակաւոր փախուստ շինություն տակ, ուր խոնարհ էր 20.000 անկի մի բազմություն: Մէջ տեղ գտնուում էին պատգամաւորները: Նստի նախագահ ընտրեց ծերագույնը—պ. d'Owens'ը, ապա մի կարճատև աղթից լիարժեք ղեկավար ղեկավարների ճախագահ ընտրեց Ուիլյամ (արեմտեան Վիրջինիայից), Ամենից առաջ վիճաբանություն է ենթարկում նախօրոք պատրաստած (ռամկապետական) կուսակցության պահանջների ծրագիրը:

Աղ ծրագրի երկրորդական նշանակություն ունեցող հարցերը մի կողմ թողնելով՝ ուշադրություն դարձնենք նրա գլխավոր կետերի վրա: Ռամկապետական ծրագիրը բողոքում է պրոտեկցիոնիստ սխառման դէմ, որը, իւր ասելով հաւասար է «մի տուրքի» որ վերցնում է ամբոխից լողող սակավաթիւ գործարանատէրերի: Ռամկապետական ծրագիրը ընդդէմ է այն հանգամանքներին, որոնց շնորհիւ 17.000 անձինք տիրում են մեծ հանրապետության ամբողջ հարստության կեսը, իսկ 250 դրամատէրեր մի տասնեկորորդականը գողթի, որ բաժանւած է 63 միլիոն քաղաքացիների մէջ: Վիճաբանությունների ժամանակ հեղինակաւոր ատենախօսներից մեկը պ. Neal'ը այն միտքը չափանիշ որ ներկա տնտեսական դրութիւնը, որի մեղաւորներն են հանրապետական կուսակցութիւնը և դրա պարագլուխ նախագահ Հարրիսոնը—նմանում է այն քաղաքական դրութեանը, որից ազատելու համար ամերիկացիները ապստամբեցին Անգլիայի դէմ և որ նույնաման միջոցների պէտք է ձեռնարկել և ալժամ ընդդէմ հանրապետականներին:

Այս կէտը ամենանշանաւորն է ռամկապետական ծրագրի մէջ և հոգատարութիւնը աշխատաւոր դատակարգի համար ընդդէմ սակաւաթիւ դրամատէրերի՝ լինելու է նախագահական ընտրութիւնների կռիւ պաշ-

քաղաքը, Այս մեծ խնդիրը կլանելով բոլոր այլ խնդիրները՝ միացրեց բոլոր ռազմապետականներին:

Միազրի մասին եղած վիճաբանութիւնները տեւեցին 6½ ժամ և երեկոյեան ժամը 6 էր, երբ ծրագիրը ամբողջապէս ընդունւեց ներկալ եղած ռազմապետական պատգամաւորների կողմից: Ապա գլխացին քաջարկութեամբ, Ժողովի նախագահը սովորութեան համեմատ նահանգների ալքուրենական կարգով հարցնում է նահանգի թիկնածուի անունը, եթէ նահանգը համաձայնութեան է եկել մի անւան վրա: Բոլոր նահանգների անունները տալուց լսող տեղի է ունենում մի երկրորդ քաջարկութիւն, որի ժամանակ երբ դարձեալ տրւում են նահանգների անունները—ամեն մէկ նահանգի ներկայացուցիչը լատնում է իւր վերջնական որոշումը՝ լատնելով թէ նա ալքան քաջ տալիս է ալս թիկնածուին, ալսքանը ալս մէկին և ալլն, իսկ եթէ որ և է նահանգ միաձայն ընտրած ունի մի թիկնածու,—նոյն նահանգի ներկայացուցիչը լատարարում է թէ իմ նահանգը իւր բոլոր ալսքան քաջները տալիս է միաձայն ալս ինչ թիկնածուին:

Որովհետև սկզբից լատնի չէր թէ ով կը լաղթի և չկար տրամադրութիւն կլեւելանդին միաձայն ընտրելու,—քիչ աւելի մանրամասն խօսե՞նք ընտրութիւնների մասին՝ վիչեցնելով որ Նիու-Յորկի նահանգը (որը ի դէպս ասած Empire-State, ալսինքն պետական նահանգ է անւանում) ունէր իւր թիկնածուն Կանձին Դ. Հիլլի:

Ուրեմն միալն թիկնածուների անունը հարցնելով (առանց քաջների թւի) քարտուղարը կոչում է բարձրաձայն՝

—Ալաբամա:

Պատասխան չկալ: Ալաբամա նահանգի քաջները բաժանւած լինելով ներկայացուցիչը չի լատարարում նահանգի թիկնածուի անունը, բայց թէ նա կը պատասխանի երկրորդ հարցի ժամանակ՝ ասելով թէ իւր քաջներից ում ինչքան է տալիս:

—Արկանզաս, հարցնում է քարտուղարը:

Թէև կարծւում է, որ Արկանզասը կլեւելանդի կողմն է, բայց նահանգի ներկայացուցիչը լատարարում է որ խօսելու հերթը ղիջանում է Նիու Ջերսի (New-Jersey) նահանգի ներկայացուցչին:

Տեղիցը վեր է կենում Նիու Ջերսիի ներկայացուցիչ պ. Արքիտտը (Abbott), որը ընդամին է և նահանգապետ և առաջնակարգ հետտորի հուշակ է վաելում: Սա իւր լաջող ճառի մէջ առաջ է բերում բոլոր ալն հանգամանքները, որոնք խօսում են կլեւելանդի օգտին և իւր ճառը վերջացնում ասելով՝ որ Նիու Ջերսի'ն, որի ներկայացուցիչն է ինքը, իւր բոլոր ձայները կտալ կլեւելանդին: Անասելի ծափահարութիւններ և աղմուկ կլեւելանդի հակառակորդները պիտի ալխատեն որ սա չանցնի առաջին ընթերցումի ժամանակ — քանի որ ալդ հանգամանքը նրան կը նպատի:

ազդելով լաջորդ հետադարձների վճռի վրա: Ազդույնը շարունակում է, Կլե-
ւեկանդի համախոհները իրար են նայում, հակառակորդները իրար, հան-
դիսականներից շատերը խաղաղում են իրանց թաշկինակները օդի մէջ,
ոմանք բղաւտւում—մի խօսքով կատարեալ խառնաշփոթութիւն, որովհետեւ
գլխաւոր թիկնածուի անունը արդէն արտասանւածը:

Սրբ խաղաղութիւնը նորից տիրում է դահլիճում, նահանգապետ ներ-
կայացուցիչը բարձրաձայն շարունակում է ակսպէս. «Եթէ ձեզ հարցնելու
լինին թէ ինչու Կլեւեկանդի անունը ակսպիսի ուրախութեամբ ընդունւեց
ալտոնդ ձեր ներկայութեամբ, ինչու անունը արդ մարդու, որը ոչ տեղեր
ունի բաժանելու, ոչ միլիոններ իրան պաշտպանելու, ամենաաչքի ընկնող
մարդն է մեծ ռամկապետական և ամերիկական միութեան կուսակցու-
թիւնների համար—պատասխանեցէք որ նա է, որովհետեւ առաջինն էր՝ որ
իւր 1887 թ. նախագահական պատգամագրութեան մէջ քաջութիւն ունե-
ցաւ մերձեցաւ կենսական խնդրին, սկզբունքները գերադասել իւր
անձնական շահերին, քաջութեամբ մատնացուց անել ներկալ տնտեսական
վարչութեան վտանգները, և պատրաստ լինել դիմադրելու ամբոխի հարս-
տահարելուն դրամատէրների կողմից: Եթէ ակսոր պարզ և որոշ է դրում—
խնդիրը հասարակաց շահերի և կարող փոքրամասնութեան մէջ—արդ բանում
սլաքողական ենք Կլեւեկանդին: Ռամկապետական կուսակցութեան քէար-
կութիւնը կը սրբագործի ձեր ցոյց տւած ընդունելութիւնը դէպի նրա թիկ-
նածութիւնը և իշխանութեան կը հասցնի արդ արդար մարդուն, որին
մենք պատիւ ենք համարում մեր շարքերին պատկանելը տեսնել: Ես չեմ
կասկածում որ ակն փառաւոր ցուցերից չետու, որոնց դուք ներկալ էիք՝ հա-
կառակ բոլոր ժամանակաւոր տարաձայնութիւններին,—ես չեմ կասկածում
որ բոլոր ձայները ռամկապետական կուսակցութեան եկող շողմբեր ամսին
կըտրեն Գրովեր Կլեւեկանդի անունը: Ճառի ակն վերջը առաջ է բերում մեծ
աղմուկ և բողոքներ Նիու-Խորկի պատգամաւորների կողմից, բայց նահան-
գապետ Արքեպիսկոպոսը՝ որը գիտեմք էր ակսպիսի ձև տւել իւր խօսքերին՝
բացականչում է բարձրաձայն. «Ես տեսել էի բոլոր ձայները ռամկապե-
տական կուսակցութեան. ես չէի վիշել Նիու Խորկը»:

Տեղի է ունենում աւելի ևս մեծ աղմուկ, նորից խառնաշփոթութիւն,
նորից բողոքներ Նիու-Խորկի պատգամաւորութեան կողմից և նոր ու
աւելի ուժեղ ծափահարութիւններ հանդիսականների կողմից: Նահան-
գապետի Արքեպիսկոպոսը խօսքերի հասցէին: Ինչպէս կը բաժանւեն ձայները—
ահա գլխաւոր հարցը: Նիու Խորկը տէր է 72 ձայնի, Պենսիլւանիան 64,
Իլլինոյսը 48: Քանիք կտրեն Հիլին, քանիք Կլեւեկանդին:

—Կալիֆոռնիա, հարցնում է քարտուղարը:

—Կալիֆոռնիան, ասում է սրա ներկայացուցիչը, իւր հերթը տալիս
է Նիու-Խորկին:

Գիշերապ ժամի մէկն է:

Ուրի է կանգնում է պ. Witt'ը—Կլեւելանդի կուսակցութեան հակա-
ռակորդը—Կլեւելանդի՝ որին մի ուրիշ ճառի մէջ նոր ատենախօսը անա-
նել էր «կաւի ոտներով մի քուրմ» Այս անգամ պ. Վիտտը աւելի զգուշ
է դաժնում և լոկ Հիլլի թեկնածութիւնը զնում,—մի թեկնածութիւն՝ որին
պաշտպան են հանդիսանում թէ գնեցրաւ Sickles'ը—անկախութեան պա-
տերազմի ներկայացուցիչներէր յիսն և թէ ժողովրդական ատենախօս
Bourke Cockran'ը:

Սոցա թեկնածուի անունը նմանապէս, բայց աւելի օակաւ ոգեւորած
ժափահարութիւնների է արժանանում և այն աւելի փոքր շրջանից, Հերթը
գալիս է միւս նահանգներին: Յիշատակում են նոր թեկնածուներ. Մոր-
րիսոն, Կեմպել Գորման:

Գառնում է ժամը 2, երբ պատգամաւորներէր, մէկը առաջարկում է
նիստը վետաձգել կէսօրուան:

Առաջարկութիւնը մերժում է և գիշերապ ժամը երեքին սկսում է.
վերջնական քւէարկութիւնը առանց ճառախօսութիւնների և առանց վիճա-
րանութիւնների:

—Ալաբամա, նորից հարցնում է բարձրագոյն կերպով ալաբամա-
կան կարգով պ. քարտուղարը:

—Ալաբամա նահանգը, պատասխանում է սրա ներկայացուցիչների
նախագահը, տալիս է 14 ձայն Գրովեր Կլեւելանդին, 2 Հիլլին, 1 ձայն
Boies'ին, 2 ձայն Գեմպելին, 1 ձայն Կորմանին:

Կլեւելանդի համախոհները ուրախանում են. նրանց նպատակն է
բաժանել տալ ձայները:

—Արկանզաս:

—Արկանզասը տալիս է իւր 16 ձայները Գրովեր Կլեւելանդին:

—Վալիֆօրնիա:

Նա տալիս է իւր 18 ձայները Կլեւելանդին:

Ուրեմն առաջին քւէարկութեան ժամանակ խօսքը տալով Նիու-
իօրկին՝ ղիտաւորութիւն ունէր արագացնել հակառակորդների չափա-
րութիւնը:

—Վուրմինգտոն:

4 ձայն Հիլլին, 5 ձայն Boies'ին:

Հերթը գալիս է խոշոր նահանգներին:

—Իլլինոյս:

—Իլլինոյսը, պատասխանում է սրա պատգամաւորութեան նախա-
գահ Ա. Սանլենսոնը, տալիս է իւր 48 ձայները Գրովեր Կլեւելանդին:

—Նիու-Իօրկ:

—72 ձայն Հիլլին, պատասխանում է նահանգի ներկայացուցիչը:

Մինչև այս լատարարութիւնը կլեւելանդը ունէր մեծամասնութիւն, բայց 72 խոշոր թիւը նրան փոքրամասնութեան դարձրեց:

Պենսիլվանիան իւր 64 ձայները արձանագրում է կլեւելանդի համար այս նոր լատարարութիւնը նորից մեծամասնութեան է դարձնում կլեւելանդի թեկնածութիւնը և պատճառ դառնում նոր ազմովների և աննկարագրելի խառնաշփոթութեան:

—Տեխասը իւր 23 ձայները տալիս է կլեւելանդին, բացականշում է աղջ խառնաշփոթութեան միջոցին Տեխասի ներկայացուցիչը և ազմուկը և ամբոխի գրգռումը հասցնում ծաղրալեզութեան և բուռն բողոքների, երբ լաղթիւ կարծող կլեւելանդի կուսակցութեան տաքարիւնները բաց են անում իրանց լաղթող թեկնածուի կապուտ և ոսկեզոյն դրօշակը: Բողոքները կրկնապատկուտ և եռապատկուտ են, երբ Դիկինսոնը Միչիգանի նահանգից, ոտի կանգնելով՝ համոզում է ամբոխին հանդատանալ և անկարգութեամբ առիթ չը տալ իրանց որոշումները չը լալտնած նահանգներին՝ իրանց վճիռը վերջին բողէին ի վնաս կլեւելանդի փոխելու:

Խաղաղութիւնը նորից տիրում է դահլիճում և ութը նոր նահանգներ հերթով տալիս են իրանց ձայները կլեւելանդին, որ և ստանում է մեծամասնութիւն: Քարտուղարը պատրաստուտ է աղղարարել ժողովին քւէարկութեան արդիւնքը, բայց նրան կանխում է սենատոր Դանիելսը վիրգինիալից:

—Այս խնդրում եմ ժողովիս նախագահից քւէարկութեան ենթարկել հետեւալը. «Դրովեր կլեւելանդը նշանակւեց միաձայն հաւանութեամբ թեկնածու ռամկապետական կուսակցութեան 1892 թ. նախագահական ընտրութիւնների համար»:

Այս առաջարկութեանը հետևում են որոտընդոտ ծափահարութիւններ:

Bourke Cockran'ը խօսք է ուղում: Ամենքը սպասում են մի բողոքի:

—Իսկ ես, ասում է նա, խնդրում եմ ի նկատ առնել, որ Նիու-Խօրկի պատգամաւորութիւնը—որը մինչև հիմա էր ի նպաստ Հիլլի—խոնարհում է մեծամասնութեան վճռի առաջ և մի մարդու պէս ոտի կը կանգնի կլեւելանդին—ռամկապետական կուսակցութեան ընտրւածը լատարարելու: Այսպէս վերջացաւ աղ օրւալ ընտրութիւնը տեւելով 16¹/₃ ժամ:

ձաշից վետու նորից ժողով եղաւ, թեկնածու ընտրելու փոխնախագահութեան համար: Առանց սկզբում մեծամասնութիւն ունենալու ընտրւեց դեներալ Ստեւենսոնը շնորհիւ շատերի՝ վերջին բողէին փոխած որոշման՝ սրա օգտին:

Օտար լեզուներով նորերս լուս տեսած գրքերից արձանագրենք.

—Arménie, Kurdistan et Mesopotamie par M. le comte de Cholet.
(Արմէնիա, Բուրդիստան և Միջագետք ճանապարհորդական տպաւորութիւններ դուքս դը Շոլէի)։

Հեղինակը արեւ է իւր ճանապարհորդութիւնը անցեալ տարի Նրա գրքից մէջ բերենք մի քանի տող միայն վերաբերեալ հայերին։ «Հայերի դրութիւնը երբեմն անտանելի է և ես երբէք չէի կարող երեակալել, որ թշուառութիւնը կարող լինէր ալդ ատիճանին հասնել սրանց երկրի մի քանի մասերում, Տաճկական լուծը ծանրանում է սրանց վրա ամեն օր ամելի ու ամելի ծանր և ես անկարող էի վկայ լինել առանց լուզելութեան թիւ անիրաւ հարկադրանքումներից ու կեղեքումների և թէ ամենահամար անիրաւութիւններից, որոնց հայերը անընդհատ զոհ են դառնում։

—Voyage au Mont Ararat, de Jules Leclercq. (ճանապարհորդութիւն դէպի Արարատ սարը, Ժիւլ Լեկլերկի—Բելգիական թագաւորական Աշխարհագրական Ընկերութեան նախագահի)։

Բուրդոն, Բ.—Էմոցիանների և տենդենցների արտապատկութիւնը լեզուի մէջ, Պարիզ (գինն է մօտ 3 ռ.)։

Դըժոբ, Կ. (Dejob, C.).—Հանրալին կրթութիւնը Ֆրանսիայում և Իտալիայում 19-րդ դարում, Պարիզ, գինն է 1 ռ. 50 կոպէկ։

Շովէն, Ժ.—Պատմական էտիւդ կանանց մատչելի պրոֆեսիանների մասին, Պարիզ, գինն է 3 ռուբլի։

Բրոննէս, Հ. Գ.—Կենդանական աշխարհի դասակարգութիւնը, գիտնականօրէն ներկայացրած խօսքով և պատկերով, հատոր III. Մոլլուակներ, Նորից մշակեց Հ. Սիմրոթ. տետր I. Լէյպցիգ, գինն է 70 կ.։

Ռեցիուս, Գ.—Բիոլոգիական հետազոտութիւններ, Նոր շարք, III. Ստոկհոմ. նկարներով, գինն է 16 ռուբլի։

Ռոմէնս, Գ. Ժ.—Դարւին և ըստ Դարւինի. Դարւինի թէօրիալի մեկնութիւնը և բացատրութիւնը դարւինական վիճելի խնդիրների, Հատոր I. Դարւինի թէօրիան, Անգլիերէնից թարգմանեց գերմաներէն Բ. Ֆետտէր, Լէյպցիգ, Պատկերով և 124 նկարներով, գինն է 4 ռուբլի։

Էլլիս, Ժ.—Վ. Է. Գլադստոն, Լոնդոն, գինն է 1 ռ. 50 կոպ.։

Ընդհանուր պատմութիւն, մասնակցութեամբ Ֆ. Բեցուլի, Ալ. Բրիւլլեյի և ուրիշների, հրատարակութեամբ Վ. Օնկէն'ի, Մասն V, հատոր I, նկարներով և քարտէսներով, Բերլին, գինն է 8 ռուբլի։

Մոլտկէ.—Գրածքներ և լիշատակարաններ, Հատոր V. Բերլին, գինն է 2 ռ. 50 կոպէկ։

Շիլլերի նամակները, հրատարակութեամբ և ծանօթութիւններով Ֆ. Ժոնասի, Հատոր I. Շտուտգարտ, պատկերով, գ. 1 ռ. 50 կոպ.։

Շտոլպէ, Հ.—Բնադրելի զարգացման երևութներ, Վիեննա, գինն է 2 ռուբլի,

Հոմէլ, Ֆ.—Եգիպտական կուտուրալի բաբելոնական ծագումը, Միւնխէն, գինն է 4 ռուբլի,

Բրիւնստիէր, Ֆ.—Ֆրանսիական թատրոնի էպոխաները 1636—1850. Պարիզ, գինն է 1 ռ. 75 կոպէկ,

Ֆ.